Վերջացնելով իր խօսակցութիւնը նրա հետ, Մըհեն դարձաւ դէպի ինձ այս խօսքերով.

— Ես հիմա գիտեմ, թէ ուր է գնացել Ասլանը, ես քեզ կը տանեմ ուղիղ նրա մօտ, այս մարդը մեզ պէտք չէ:

— Բայց դու ճանապարհը ճանաչո՞ւմ ես, — հարցրի ես:

— Սատանայի պէս:

— Բայց քանի որ դուք չէք ուզում այստեղ հանգստանալ, սպասեցէք, մինչեւ ես մի բան կը բերեմ ճանապարհին ուտելու համար, — ասաց զէյթունցին եւ վազեց դէպի գիւղը:

Նա մտաւ գիւղի ծայրումը գտնուած տներից մէկի մէջ եւ քանի րոպէից յետոյ դուրս եկաւ մի մաղ՝ ձեռին բռնած: Նրա մէջ դրած էին մի քանի հատ տափակ, լայն եւ բոլորակ հացի նման բաներ, մի փոքր դեղնագոյն եւ երեսներն օծած մեղրով: Դա չորացրած սէր էր, բաւականին հաստ զանգուածով, Հայաստանի պարարտ կաթի արդիւնքն էր:

Մըհէն երկու հատ առեց, եւ փողի նման գալարելով, մի րոպէում կերաւ:

— Մըհէն էսպիսի սատանայական բաներով չի կշտանայ, գնա՛յ, հաց բեր, — ասաց զէյթունցուն:

Բայց ես մէկ հատի կէսը հազիւ կարողացայ ուտել, այնքան պարարտ եւ սննդարար էր սերը:

— Ես հաց ունեմ հետս վերառած, երբ որ քաղցած լինես, կը տամ, հիմա գնանք, ուշ է, Մըհէ, — ասեցի նրան:

— Հիմա տո՛ւր, երբ փորս դատարկ է:

Զէյթունցի տղամարդը չթողեց ինձ բաց անել խուրջինը, որ կապած էր ձիուս գաւակին, որի մէջ Մարօն ինձ համար ճանապարհի պաշար էր դրած, այլ ինքը գնաց, բերեց երկու հատ գարեհացի ահագին բլիթներ: Մըհէն նրանց եւս կերաւ: Այնուհետեւ մենք ճանապարհ ընկանք:

Արեւն արդէն սկսել էր թեքուել իր կէսօրուայ կէտից դէպի մուտքը:

ԽԲ. ՀԱՅ ՀՈՎԻՒՆԵՐ

Մըհէն հայոց լեռների գազանն էր. նա այնպիսի անյայտ շաւիղներով տանում էր ինձ, ուր սատանան ինքը կը մոլորուէր: Ես ստիպուած էի ցած իջնել ձիուցս: Սարերի ելեւէջներն այնքան դժուարին էին, որ ձիս չէր կարողա-